


կան եօթ հարիւր բուր, նպաստ ապ կրեանի
Կոնսիստորիայի միջոցով այլի տիկին Արտվեան-
ցին և պ. Մ. Պալեանցին:

Ա Ջ Դ.

Ի ԳԻՒԱՆԷ ԿԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Այսու յայտարարի ի գիտութիւն Գե-
րաստախ Առաջնորդաց, Կոնսիստորիայից,
Բարեշնորհ փոխանորդաց, Հոգեւոր կառավա-
րութեանց, Գործակալաց և համայն հոգեւոր
և աշխարհիկ դասու մերազնեից եթէ ՆՈՐԻՆ
ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ Ազգիս
ի նկատ առեալ զբաղմադիմի բողոքս արառն-
ջըս և անբաւականութիւնս վերաբերեալս ա-
պօրինի և աննիւրիկ պատկաց, անվայել և ան-
պատշաճ վարմանց Տաճկահայաստակ Մաշա-
տուր քահանայի Տէր Յարութիւնեանց Չորուկ
գեղջ Ալաշկերտացոյ ի վիճակս Կարուց և
Աղէքսանդրապոլի, իսպառ կարգադուրկ
արար ի քահանայական կոչմանէ և աստիճանէ
զվիշեալ Մաշատուրն Տէր Յարութիւնեանց:

Աւստի ուր ուրեք և պատահեցի յիշ-
շեալ կարգադուրկն, չձանաչել զնա որպէս
քահանայ և կատարող հոգեւոր պաշտամանց և
օրինակատարութեանց այլ սոսկ աշխարհիկ ոմն:



ԿՐՕՆԱԿԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Ա.

ԱՌԱՆՅ կրօնական կեանքի ի զուր է
մեր եկեղեցու հոգեւոր վերածնու-
թեան մասին մտածել. ժողովրդի բարոյական

և հոգեւոր շարժման գիտութեան և քաղա-
քակրթութեան առողջ զարգացան առաջին
պայմանը կրօնական վերակենդանութիւնն է:
Այս միտքը շատ անգամ շօշափել ենք Արա-
րատի էջերում. ներկայիս կամենում ենք
առանձին խորհրդածութեան նիւթ դարձնել
թէ ի՞նչ է նշանակում կրօնական անձնաւո-
րութիւն լինել որով և յոյս ունինք թէ
մեր բնիկեցողներն համար կարգուի այն
խնդիրը, թէ որքան իրաւունք ունինք այդ
միտքը իրրեւ ճշմարտութիւն քարոզելու:

Մի քանի խօսքով պարզենք նախ թէ
ինչ է կրօնը որպէս զի աւելի գիւրութեամբ
կարողանանք պատասխանել թէ ի՞նչ է նշա-
նակում կրօնական անձնաւորութիւն լինել:
Մարդու և Աստուծոյ յարաբերութիւնն է
կրօնը. նա ծագում է այն հաւատից, թէ
կայ մէկը, որ տիեզերքի և մեր ներքին աշ-
խարհի Տէրն ու Կառավարիչն է: Ասածուն
որոնել ու գտնել Աստուծով յուսալ սիրել
ապրել և մեռնել կրօնի էութիւնը, նպատակն
ու բովանդակութիւնն է կազմում: Աստուծոյ
և մարդկային հոգու յարաբերութիւնը կա-
տարւում է ազօթքով, լինի անմահուհ, թէ
խօսքով, որ կրօնի մէջ ամենից էականն է:
Ով ազօթել չի կարող ճշմարտութեամբ, նա չէ
կարող կրօնական լինել բառի աղնիւ իմաստով:
Որովհետեւ անբիծ, անարատ սրտով ազօթել
նշանակում է մեր ներքին հոգեկան աշխարհը
իւր բոլոր դադանիքներով Աստուծոյ առաջ
գնել, նշանակում է ամենաթանկագին զոհա-
բերութիւնն տնել, այսինքն Աստուծուն նուէր
բերել մեր սիրտը, մեր հոգին, ոչնչացնել մեր
հան ու էութիւնը Աստուծու կամքը կատարե-
լու: Աստուծոյ համար ապրելու նպատակով:
Այսպիսի զոհաբերութիւնը միմիայն խորին
սիրուց կարող է բղխել ուստի և հասկանալի
պէտք է լինի թէ ինչու Տէրը ամենից մեծ
պատուէրը կրօնի մէջ դէպի Աստուած ունե-
ցած սէրն է համարում:

Այսպէս գտաւորով՝ ինքնին հասկանա-
լի է, որ մեր հասկացողութեամբ ազօթքի
բոլորները մարդու կեանքի մէջ ամենից նուե-
րական ժամերն են և ուրիմն հայհոյութիւն
է այն կարծիքը, թէ ազօթելը ժամանակի
կորուստ է: Ազօթել և յոյսն Աստուծոյ վի-

րայ գնել չէ նշանակում՝ ծուխնայ փախ-
չել լուրջ և մինչև իսկ ծանր աշխատանքից,
ընդհատակ ճշմարիտ կրօնական անձը իւր
ժամանակի վերայ նայում է որպէս Աստու-
ծոյ պարգևի վերայ որ պէտք է յոգուե-
լնելիքի գործադրութի և որի համար մի
որ հաշիւ պիտի պահանջուի իրենից: Մոյլը
աշխատանքից խուսափողը փորձնականապէս
նոյնպէս քրիստոնէութեան հակառակորդ է,
ինչպէս անբարոյականը: Քրիստոնէութեան մէջ
ծուլութիւնը մահացու մեղքերից մէկն է,
իսկ կոշտն ու աշխատանքը նուիրական որ
հաստատում է առաքելի խօսքով. «որ ոչ
կամիցի գործել և կերիցի մի»: Աղօթքի բու-
սկները կրօնական անձի համար թարմու-
թեան վերստին զօրանալու և կեանքի հոգե-
ւոր պատերազմն սկսելու բողկներ են:

Բ.

Աղօթող և կրօնական անձի զօրութեան
աղբիւրը նորա հաւատն է զէպի Աստուած,
որի գոյութեան ապացոյցներն մասին խօսք
լինել չէ կարող այստեղ: Մենք կամենում ենք
կրօնի էութիւնն ու կրօնական լինելու երե-
ւոյթը բացատրել, իսկ կրօնական մարդու հա-
մար ապացոյցներն փխխոփայական — զիանա-
կան տեսութիւններ կարեւոր չեն Աստուծոյ
գոյութիւնը հաստատելու համար: Նա զգում
է արդէն որ Աստուած իւր հոգու մէջ բնա-
կութիւն է հաստատել, որ Բարձրեայի աջը
առաջնորդում է նորան կեանքի բոլոր գործո-
ղութիւնների ժամանակ: Նա կասկած չունի
Աստուծոյ գոյութեան մասին, ուստի և ան-
կարօտ է ապացոյցների զիմել ճշմարտութեան
մէջ համոզուելու համար: Կրօնի հիմքը մար-
դու զէպի Աստուած ունեցած Կենդանի հա-
ւատն է. րայց մի հաւատ որ ցնորք, երեւա-
կայութիւն չէ, այլ նոյնպէս իրական նոյնպէս
շօշափելի, ինչպէս աւսանելի իրերը: Միայն
հաւատի անսողութեան և շօշափման պայ-
մաններն ուրիշ են, քան իրական աւարկա-
ներինը: Կրօնական անձնաւորութիւնների
փսիւժ պատկերները, կրօնի բերած բարիքը,
նորա պահանջը կեանքի բարեփոխութեան

համար իրական ապացոյցներ են, թէ որոշ
աւսակետով կրօնը նոյնպէս բնական է և իրա-
կան, որքան և արեւելքի մէջ նկատուած ֆի-
զիկական օրէնքը: Կրօնական անձնաւորութեան
կեանքի աղբիւրը Աստուած է, այնտեղից է
նա զօրութիւն և յոյս ստանում կեանքի մէջ
քաջութեամբ պատերազմելու: Տէր լոյս իմ
և կեանք իմ, ես յուսում երկեայց, Տէր ա-
պաւէն կենաց իմոց, ես յուսում, զապացայց:
Աւելի կարուկ նոյն իմաստն արտայայտում է
Պօղոս. «եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ
մեր հակառակ: Կրօնական անձնաւորութիւ-
նըն այսպէս իւր յոյսը Աստուծոյ վերայ
գրած՝ քաջարար ընթանում է կեանքի՝ ամեն
պայմանների մէջ: Իսկ յոյսը զօրութիւն է,
յաջողութեան, ապագայի յառաջադիմու-
թեան խորիխը: Այլ յոյս չունի իւր
ապագայի համար, նա արդէն՝ կորստեան
անդունդի վերայ է կանգնած: Քրիստոնէան
անընդհատ առաջ է գնում, որովհետեւ իւր
յոյսը գրած է անսպառ զօրութեան աղբիւրի
այսինքն Աստուծոյ վերայ: Այդպիսի զօրու-
թիւն ձեռք բերելու միակ միջոցը Աստուծոյ
նուիրելն է, սեպհական կեանքի ոչնչացումը
Աստուծոյ համար:

Մարդկային սովորական դատողութեամբ
շատ տարօրինակ է այս երեւոյթը: Թոյլ կամ
քիչ զուրկ ենք համարում այն անձնաւորու-
թեան, որ ենթարկւում է ուրիշի կամքին:
Իայց կրօնական անձը, որքան աւելի ենթար-
կուի Աստուծոյ կամքին, որքան աւելի ոչնչ-
չացնի իւր եսը Աստուծոյ համար ապրելու
նպատակով, նոյնքան հզօր է, նոյնքան մեծ
կամքի և բարոյական զօրութեան տէր: Պօղոս
առաքելալը կամքի զօրութեան մարմնացումն
էր, անյողողող ամեն դժուարութեան մէջ,
աներկիւղ մահուան զէմ, կրտստ, գործու-
նեայ մի խօսքով հերոսական մի անձնաւո-
րութիւն, որ երեսուն տարի իւր կեանքը
աւետարանի քարոզութեան, իւր նման մարդ-
կանց հոգեւոր փրկութեանը նուիրեց: Եւ
այդպիսի մարդը. «Կենդանի եմ այսուհետեւ
ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» խօս-
քերն էր ասում իւր մասին:

Գ.

Վերոյիշեալ նկատողութիւններէց պէտք է պարզ լինի որ կրօնական անձնաւորութիւն դառնալը դժուար է երկարատե կրթութեան, սկզբունքների հետեւողական գործադրութեան հետ կապուած մի երեւոյթ է: Կրօնական անձը իւր կեանքի վերայ մեծ լրջութեամբ է նայում: Աստուծոյ կողմից այս աշխարհում կարգուած մի անաեւ է, որ իւր կոչման և պատրաստութեան համաձայն հետամուտ պիտի լինի շահեցնելու Աստուծոյ ստացած քանքարը: Ամեն մարդու գործ չէ կրօնական լինել, Աստուծոյ հոգեւոր զինուոր, այս դայթակղութիւններով լի աշխարհում բայց ամեն մարդու բարձրագոյն ձգտումը պիտի լինի կրօնական լինել, եթէ կեանքին վսեմ բովանդակութիւն տալ է կամենում: Շատ քիչ են ճշմարիտ կրօնական անձնաւորութիւնները, ընտրեալներ միայն արժանի են այդ անուան, բայց այնքան մեծ է կրօնի ոյժը, որ եթէ մի քանի առաքեալներ ունի նա և փոքր ինչ հաստատուած է ժողովրդի սրտում: Տրաքներ է կատարում: Մենք կլնդրէինք լուրջ ուշադրութիւն դարձնել պատմական այն երեւոյթի վերայ, թէ ի՞նչն է պատճառ, որ կրօնի հիմնադիրներին պաշտում իսկ ամենատաղանդաւոր արուեստագետներին, բանաստեղծներին, գիտնականներին յարգում ենք միայն: Արովհետեւ կրօնը աւելի մեծ զօրութիւն է, քան արուեստը, գիտութիւնը, բանաստեղծութիւնը: Կրօնը նորոգում է մեր ներքինը, սրբում է մեր հոգին, իսկ բանաստեղծութիւնն ու գիտութիւնը միայն նպաստում: Ամենամեծ բանաստեղծներն իսկ իրենց մարդասիրական զաղափարներով միայն կրօնի պահանջների լաւագոյն արձագանքներն են:

Յիրաւի ի՞նչ է պահանջում մեզանից քրիստոնէութիւնը, եթէ ոչ մտքի և սրտի սրբութիւն, բարոյական կեանք, կարեկցութիւն դէպի թշուառը, սէր դէպի մեզ նման մարդը: Քրիստոնէական կրօնը պահանջում է մեզանից, որ մենք անառակ չլինենք, որ մենք կեղեքող և վաշխառու չլինենք, որ մենք զող և աւազակ չլինենք, այլ արդար վաստակով

ապրողներ, որ մենք ազնիւ և սիրոյ զաղափարներով առաջնորդուինք մեր բոլոր գործողութիւնների ժամանակ: Քրիստոնէութիւնը պահանջում է, որ եթէ վաճառական ենք, հինգ կոպէկի համար մեր հոգին չծախենք, եթէ արհեստաւոր մեզ յանձնած գործը բարեխղճութեամբ կատարենք, եթէ լրագրում գրող մեր դրիշը չվաճառենք, ուրիշներին զրպարակու, ժողովրդին տուութիւններով մոլորեցնելու և մեր եսական շահերի համար չգործադրենք, այլ արդարութեան, բարոյական կրթութեան համար: Քրիստոնէութիւնը պահանջում է, որ յարգենք ուրիշի անձնաւորութիւնը, ուրիշի հետ այնպէս վարուինք, ինչպէս կկամենայինք ուրիշները մեզ հետ վարուին: «Մառն ի սրտոյ իւրմէ ճանաչի» քրիստոնէութեան այս պահանջներից և նորան հետեւող անձանց կենդանի օրինակներից էլ պէտք է եղբակացներ, որ կրօնը շատ ազնիւ և կարեւոր բան է մարդկութեան բարոյական յառաջադիմութեան համար: Աւրեմ չարաչար սխալում են այն մարդիկ, որոնք կրօնը անպէտք՝ հնացած են համարում:

Գ.

Ազգերի պատմութեան մէջ կտրեւորն ու յաւիտենականը նոցա հոգեւոր, քաղաքակրթական կեանքն է, իսկ այն քաղաքակրթութիւնը, որ կրօնական-բարոյական հիմունքների վերայ չէ ընթանում, հիւանդոտ է և վնասակար: Անբարոյական սկզբունքներով ընթացող քաղաքակրթութիւնը ոչ միայն օգտակար լինել չէ կարող, այլ և իբրեւ որդ կրծում է ժողովրդի գոյութեան արմատը: Անբարոյական սկզբունքներով առաջնորդուող քաղաքակրթութեան հետեանքը մահն է: Աստուութիւնը ցոյց է տալիս, թէ ազգերի կեանքի համար ոչ մի բան այնպէս վտանգաւոր չէ, ինչպէս անհասարակ է ու անբարոյականութիւնը: Սովոր ու սուրբ, հալածանքը միայն ժամանակաւոր վտանգներ են, այն ինչ բարոյական անկումը ժողովրդի մահուան նախանշանն է: Անհաւատութիւն և անբարոյականութիւն մենք իրաւամբ կապում ենք միմեանց հետ, որովհետեւ ամենասերտ կերպով շաղկապուած են նորա

միմանց հետ: Բարոյական սկզբունքները առանց կրօնի դուրսէ անհասանելի համար կեանքի և գործողութեան առաջնորդ լինին: Բայց ամբողջ ժողովուրդ առանց կենդանի կրօնի անկարելի է առաջնորդել բարոյական սկզբունքներով: Յունաց և հռոմայեցւոց պատմութիւնը կրօնի անկման շրջաններում երբեմն բարոյական անձնաւորութիւնների պատկերներ է տալիս որոնք իրենց փիլիսոփայական սկզբունքների համեմատ էլ կեանք էին վարում: Բայց ժողովրդի մեծամասնութիւնը անարգելք դէպի անբարոյականութեան անդունդն էր գլորւում: Կրօնն է բարոյականութեան աղբիւրը՝ զոնէ քրիստոնէութեան մէջ՝ ուրեմն քրիստոնեայ՝ ուրիշ խօսքով կրօնական պիտի դառնանք՝ մեր անհատական, ընտանեկան և ամբողջ ժողովրդական կեանքը բարոյական և ազնիւ դարձնելու համար: Ապա թէ ոչ ի՞նչ արժէք ունի եկեղեցու այն սպասաւորը, որ իւր կարողութեան չափ հետամուտ չէ առաքելական պաշտօն կատարելու, ի՞նչ արժէք ունի պետական այն պաշտօնեան, որ արդարութեան կշիռքը ձեռքին բռնած չունի ի՞նչ արժէք ունի այն արուեստը, որ միայն զգայական աղանդի խորհուրդներ ծնեցնելու միջոց է, ի՞նչ արժէք ունի այն լրագրութիւնը, որ ժողովրդի բարոյական կրթութեան գործին ծառայելու տեղ, անարդ միջոցներով մոլորեցնում է իւր ընթերցողներին: սովորեցնում է նրանց ստել, անուանարկել կուսակցական նպատակներին հասնելու կամ անձնական հաշիւներ մտքերելու համար: Ի՞նչ արժէք ունի այն աշխատանքը, որը նիւթապէս կամ բարոյապէս մեր և մեզ շրջապատողների օգնութեան և կրթութեան միջոց չպիտի լինի, այլ գեղիութեան, անառակութեան և ուրիշների կեղեքման միջոց: Կամե՞նում ենք մեր կեանքին վստահ բովանդակութիւն տալ, պէտք է ձգտենք վերածնունդ կրօնապէս, որպէս զի մեր գործն ու շարժումն էր որպէս հոգու պտուղ, բարեփոխուի պէպի սոխին ու բարին:

Ե.

Սակայն որն է կրօնապէս վերածնունդը և բարոյական դառնալու զազանիքը: Նախկին պրաւնների մէջ արգէն ակնարկեցինք մենք մի

քանի անգամ: Աստուծոյ կատարեալ հնազանդութեան ճանապարհն է այդ, ինչպէս գործնականապէս ցոյց է տալիս մեր կրօնական կատարելատիւ Յիսուս Քրիստոսի պատկերը: Կարելի է լոյսը նկարագրել զրչով կամ վրձինով: Բայց նորա անձնաւորութիւնը աւելի անարատ էր, քան լոյսը: Նորա կեանքը աշխատանքի և անհուն զոհաբերութեան մի շղթայ է, սուրբ և անարատ սիրոյ մարմնացում, որի կատարեալ պատկերը Նորա վերջին օրերի պատմութիւնն է մեզ տալիս: Ի՞նչով բացատրել այս իրողութիւնը, որ մի և նոյն ժամանակ մի սքանչելի խորհուրդ էր մարդկային պատմութեան մէջ, մի իմաստուն և անհասանելի կանխագիտութեան գործ պատմութեան զեկալարի կողմից: Այս խորհուրդն ըմբռնելու ցուցումներ է տալիս մեզ Տիրոջ կեանքի վերջին օրերի նկարագրութիւնը՝ Գեթսեմանի պարտիզի տեսարանը, որ մի և նոյն ժամանակ ամենամեծ զոհաբերութեան, խաչի պատմութեան նախաբանն է: Մեր Փրկիչը, կրօնական անձնաւորութեան կատարելատիւը այստեղ կենդանի կերպով կանգնած է մեր առաջ և բարոյական կատարելութեան զոհաբերութեան ճանապարհն է ցոյց տալիս: «Հայր, եթէ կամիս, անցի դրաժակս զայս յինչն, քայո՛ւ ու ի՞մ էա՞մ, այլ քայո՛ւ լինի՛ս»: Հակիրճ, բայց սրտառուչ աղօթք, որ Աստուծոյ կամքի հպատակութեան մի սրբազան ուխտ էր: Յիսուսի կեանքի, գործունէութեան ամբողջ էութիւնը կարելի է այդ աղօթքի մէջ ամփոփել. Նա եկել էր իւր Հօր կամքը կատարելու և գորանով հաստատելու, թէ կատարելութեան իսկական, արքայական պողոտան Աստուծոյ հնազանդութեան ճանապարհն է:

Թիւրիմացութեան տեղիք չտալու համար, հարկ ենք համարում մեր յօդուածը կնքելուց առաջ մի երկու խօսք էլ աւելացնել: Արբութեան այն պահանջը, որ կրօնը գնում է մեր առաջ, որ Քրիստոս կենդանի կերպով իւր անձի օրինակով քարոզում է մեզ, մարդկային տկար հոգու համար բարձր է և մինչև իսկ անհասանելի: Մարդկային բնութիւնը թոյլ է և մեղանշական, իսկ Քրիստոսի պատկերը սրբութեան և անհուն սիրոյ մարմնա-

յու մն էր: Մենք երբեք նորան հասնել չենք կարող: սրբապաշտութիւնն է մինչև իսկ մի բայէ մտածել այդ մասին: Բայց չպէտք է մոռանալ որ նոյն Փրկչի ձայնը «եկայք առիւտ» է մեզ՝ վատասակալներին և ծանրաբեռնեալներին: Առջ Է և ծանր քրիստոնեայի կեանքը: պատերազմների մի շղթայ ներքին և արտաքին աշխարհի զէմ, բայց մեծ է նոյնպէս նորա յոյսը լի է երկնային զօրութեամբ մեզքի կապանքները վերջի վերջոյ կփշրուին նորա առաջ: Կրօնական մարդու հոգեբանութիւնը հասկանալու համար ստաջարկում ենք մեր ընթերցողներին ուշադրութեամբ կարդալ Հատմ. Է. 13 հ-ից մինչև զլսի վերջը: ձշմարիտ կրօնական մարդը Պօղոսի նման զգում է մեզքի մեծ զօրութիւնը: զգում է մարդկային կամքի լծուլութիւնը մեզքի առաջ, բայց զգում է նոյնպէս որ Բարձրեալի աջը միայն նորան փրկել կարող է հզօր մեզքի որդայթներէց:

Այլ մի տառապեալ կ'աւ հայ մի կարէ ապրեցուցանել զիս ի մարմնոյ տառի մահուայ շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեսան մերոյ խօսքերը կրօնական անձի հոգու վիճակն է պարզում:

Գ. Վ. ՅՈՂՈՒՓԵԱՆ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈԴՈՒՅՍ ԵԿԵՂԵՑԻ.

Սիրակնօրեայ դպրոցներն Ռուսաստանում. С. Пет. Вѣд. լրագրի մէջ տպուած է մի համառօտ հաշիւ կերակնօրեայ դպրոցների մասին, որ քաղուածօրէն յառաջ ենք բերում: Սիրակնօրեայ դպրոցները սկսել են բացուել Ռուսաստանում 60-ական թուականներին, մեծ բարեփոխութիւնների շրջանում, երբ համարեա ամբողջ կրթութեամբ Ռուս հասարակութիւնը եռանդով ձգտում էր ուսումն ու գիտութիւն տարածել հասարակ գասակարգի մէջ: Արտիկան այս նպատակին շատ հեշտ կերպով կարող էին մեծ ծառայութիւն մատուցանել կերակնօրեայ դպրոցներն, ուստի երկրի բոլոր

կողմերում մօտ 300 այդպիսի դպրոց է հիմնուած, որոնք սահայն երկար ժամանակ չեն պահպանում իրենց գոյութիւնը, կառավարութեան կարգադրութեամբ փոխակերպուած են նորա: Ռիթուալական թուականներին նորից շարժումն է սկսուած և կերակնօրեայ դպրոցները օրըստօրէ աճում են և գառնում քաղաքակրթութեան համար անհրաժեշտ և կարեւոր հաստատութիւններ:

Պարոն Արքամովի հաշիւներից երևում է, որ արդէն սոյն 1900 թուի Յունուարի 1-ին Ռուսաստանի 175 գանազան քաղաքներում կային մասնաւոր ձեռնբեղութեամբ բացուած այդպիսի քաղմաթիւ դպրոցներ:

Այդ քաղաքներից 61-ը նահանգական, 106 գաւառական և 8 այլ: Պոստնից 106-ը ունին մի—մի կերակնօրեայ դպրոց, 49—երկու երկու, 12—երեք—երեք, 4—չորս չորս, մէկը—հինգ, մէկը՝ վեց, մէկը՝ ութ և մէկն էլ՝ տասն և մէկ: Այսպիսով մասնաւոր նախաձեռնութեամբ բացուած բոլոր կերակնօրեայ դպրոցների թիւը կլինի 286, որոնցից 144 աղջկանց, 100 տղայոց և 42 երկսեռ:

Պարոն Արքամովի հաշուով 170 այդպիսի դպրոցներում 1898—99 ուս. տ. ընթացքում սովորել են 30,098 հոգի, միջին թուով ամէն մի դպրոցում ուրեմն 177 հոգի, այս հաշուով 1900 թուի Յունուարի 1-ին բոլոր կերակնօրեայ դպրոցներում եղել են 50,000 աշակերտ, որոնցից 33,000-ից աւելի կին:

Հետաքրքրական է կերակնօրեայ դպրոցներում սովորողների տարեքը. կանանց դպրոցներում 710/0 15 տարեկանից փոքր է, և 290/0 աւելի: արական դպրոցներում 430/0 15 տարեկանից պակաս է, իսկ 670/0 աւելի: Երկսեռ դպրոցներում հաւատար են, ընդհանուր թուի 590/0 15-ից պակաս տարեք ունի և 510/0 աւելի: 12 տարեկանից փոքրին առհասարակ չեն ընդունում, մի քանի տեղ մինչև անդամ 17 տարեկն քիչ են համարում: Միւս կողմից՝ հասակի մեծութեան վրայ ամենեւին ուշադրութիւն չեն դարձնում, այնպէս որ այնտեղ կարելի է տեսնել և չափահաս մարդիկ և 50—60 տարեկանից աւելի ծերունիներ:

Սիրակնօրեայ դպրոցներն ուսման շրջանը անորոշ է. մի տարե սովորողները կազմում են 690/0, երկու տարե սովորողները 310/0 արական դպրոցներում. կանանց դպրոցներում 590/0 առաջին տարեկն է, 410/0 երկրորդ տարեկն. իսկ երկսեռ դպրոցներում արդէն տարբերութիւնը քիչ է.—530/0 առաջին տարեկն, 470/0 երկրորդ տարեկն: Երկրորդ տարեկն եկողները սովորաբար մի քանի տարե շարունակում են, և երբեմն մինչև 10 տարե մնում են կերակնօրեայ դպրոցներում: Ընթերցանութեան ևս մեծ զարկ են տալիս այդ